Հայաստանի Հանրապետություն
Armavirի մարզ
Արգավանդի գյուղապետարան

✉ գ. Արգավանդ
☎ /093.62-59-85/
«07» «02» 2014թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Արգավանդ համայնքի 2013 թ.-ի I-ի տարեկան հաշվետվություն

2014 թ.-ի փետրվարի 4-ին ժամը 12^{00}-ին Արգավանդի մշակույթի տանը կայացավ համայնքի ընդհանուր ժողով, մասնակցությամբ մարզպետարանի ներկայացուցիչ Հ.Պետրոսյանի և համայնքի 120 անդամների:

Նախագահությամբ՝ Մ. Աղաջանյանի

Քարտուղարությամբ՝ Ա. Գևորգյանի

Օրակարգում

1. 2013 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն

Զեկուցող՝ Ա.Աղաջանյան

Զեկուցողը նշեց, որ 2013 թվականի ֆինանսական տարին սկսել է առանց որևէ աշխատավարձի, եկամտային հարկի , էլեկտրաէներգիայի և այլնի պարտքերի:
2013 թվականին բյուջեի տարեկան կատարողականը և ծախսայինը՝ տես աղյուսակ N1, N2

N 1

2013թ. Արգավանդ համայնքի տարեկան բյուջեի մուտքեր

Անվանումը	2013 թ. տ. բյուջեն	փաստացի	կատ %
Վարչական բյուջեն ընդհ.	44401.5	45283.9	101.9
հողի հարկ	9000.0	8658.1	96.2
գույքահարկ	1590.0	2274.7	143.0
Ընդ. տեղ տուրք	270.4	236.8	87.5
Վարձակալական հող	2600.0	2420.9	93.1
այլ ոչ հարկ. եկամուտ	1352.5	2466.5	182.3
տեղական վճար	360.0	40.0	11.1
դոտացիա	28627.1	28627.1	100.0
այլ աղբյուրներից տրանսֆերտներ	601.5	559.8	93.0
վարչական բյուջեից /պահ. ֆոնդ/ կատ. հատկ	900.0	753.5	83.6
համ. սեփ. համարվ. գույքի օտարում	11846.6	11846.6	100.0
տարեսկզբի սատ մնացորդ	306.3	306.3	
ընդհանուր եկամուտ	56554.4	57436.8	101.5

2013թ. տարեկան բյուջեի ծախսերը

N 2

Անվանումը	Պլան	փաստացի	կատ. %
Վարչական բյուջեն ընդհ.	44684.9	42918.0	96.0
տեղական ինքնակառավարում	26280.9	25114.3	95.5
կրթություն, գիտություն մանկապարտեզ	7900.0	7900.0	100.0
սոց. օգնություն	1500.0	1330.0	88.6
մշակույթ, գրադարան	2020.0	2003.8	99.1
աղբաթափություն	1640.0	1625.4	99.1
տրանսպորտ. ճանապարհային տնտես.	544.0	324.0	59.5
բնակարանային տնտ/լույս, գազ/	3900.0	3867.0	99.1
պահուստային ֆոնդ	900.0	753.5	83.7
ֆոնդային բյուջե	12769.5	9663.0	75.6
կապիտալ շինարարություն	8000.0	7300.0	91.2
Սարքեր-սարքավորումների ձեռք բերում	1022.9	500.0	48.8
Նախագծային ծախսեր	300.0	300.0	100.0
Կապիտալ նորոգման ծախսեր	2546.6	963.0	37.8
այլ ակտիվների ձեռք. ծախսեր	900.0	600.0	66.6
ընդամենը ծախսեր	56554.4	51827.5	91.6

2013 թվականի ընթացքում գյուղում կատարվել են աղբաթափման աշխատանքներ, վերանորոգվել է խմելու ջրի ջրագիծ, վերանորոգվել են գյուղամիջյան, դաշտամիջյան ճանապարհները : Գործում է մանկապարտեզը՝ որտեղ հաճախել են 50 և ավելի երեխաներ: Կառուցվել է խմելու ջրագիծ, որը դեռ ավարտված չէ, ավարտը 2014 թվականին է : Նշվեց նաև, որ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություն՝ 1330000 /մեկ միլիոն երեք հարյուր երեսուն հազար/ դրամի չափով: Ելույթ ունեցան համայնքի բնակիչներ՝ Յ.Հակոբյանը, Վ.Պետրոսյանը,: Գ.Աղաջանյանը, Հ.Պետրոսյանը: Նրանք գնահատեցին բավարար գյուղապետարանի 2013 թվականին կատարված աշխատանքը:

Ինչպես նաև հարց բարձրացվեց դիմել Արմավիրի մարզի մարզպետ պարոն՝ Ա.Ղահրամանյանին Արգավանդ համայնքում առավելագույն կարևոր առկա խնդիրների՝

1. Մանկապարտեզի
2. ներքին ոռոգման ցանցի

վերանորգման աշխատանքների մասին:

Հույս հայտնեցին, որ մարզպետ՝ Ա.Ղահրամանյանը կընդառաջի համայնքի առկա խնդիրներից որևէ մեկը 2014 թվականի ընթացքում կյանքի կոչելու համար:

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ